

Փիլոն Ալեքսանդրացի, որպես գաղթաշխարհի հրեայ, թեև հաւատարիմ կը մնար իրենց հրեական աւանդութեանց եւ Սբ. Գիրքի Հնգամատեանին, սակայն միւս կողմէն իր յունական-հելլենիստական կրթութեամբ դրոշմուած էր եւ մեծ ջատագովն էր յունական դասական փիլիսոփայութեան:

Յիշեալ երկու յատկանիշներով օժտուած, ան փորձեց միջնորդը դառնալ եւ համադրել հրեական ու հելլենիստական մշակոյթները:

Փիլոնի առաջին յատկանիշը. - Հրեայ պահպանողական ընտանիքի մէջ հրեական աւանդութիւններու գիտակից Փիլոն, թեւ երբայերէնի շատ լաւ չէր տիրապետեր, սակայն քաջածանօթ էր Սբ. Գիրքի Հնգամատեանի յունարէն «Եօթանասնից» թարգմանութեան: Դժբախտաբար, Փիլոնի Պաղեստինի ազգակից հրեաներուն հետ ունեցած յարաբերութիւններու մասին, գրաւոր ոչ մէկ տեղեկութիւն հասած է մեզի, սակայն Փիլոն անձամբ կը յիշէ, որ Երուսաղէմի տաճարին մէջ, կրօնական արարողութեան մը մասնակցած է (այս մասին տե՛ս իր երկերէն՝ «De Providentia II», Էջ 107):

Քրիստոնեայ եկեղեցւոյ նշանաւոր աստուածաբան «եկեղեցւոյ հայրերէն», **Սբ. Հիերոնիմոս** (Hieronymus, 347 – 420 թ.) կը յիշէ նաեւ, որ Փիլոն սերած է հրեայ կրօնականներու ընտանիքէն եւ հաւանաբար յարաբերութիւն ունեցած է Պաղեստինի Սադուկեցիներուն (Sadducee) հետ:

Փիլոնի հետաքրքրութիւնը ուղղուած էր հրեաներու Սբ. Գիրքի, յատկապէս առաջին բաժնին, Հնգամատեանին, գրեթէ անտեսելով հետագայ բաժինները (ինչպէս՝ «Մարգարէները», «Սաղմոսները», եւայլն):

Փիլոնի երկրորդ յատկանիշը. - Փիլոն իր կրթութիւնը ստացած էր յունական կամ հելլենական դպրոցներու մէջ եւ կատարելապէս կը տիրապետեր յունարէնին: Հաւանաբար, ան յարաբերութիւններ ուներ նաեւ յունական այլ փիլիսոփայական դպրոցներու հետ: Փիլոն, լաւապէս սերտած էր յունական փիլիսոփայութիւնը եւ անոնցմէ առաւելաբար նախընտրած էր պլատոնական ուղղութիւնը:

Ալեքսանդրիոյ մէջ, Փիլոն նաեւ գործօն մասնակցութիւն կը բերէր յունահելլենիստական մշակութային եւ ընկերա-հասարակական կեանքին: Օրինակ, ան յաճախ ներկայ կ'ըլլար երաժշտական ձեռնարկներու, թատերական ներկայացումներու եւ մարզախաղերու:

ՓԻԼՈՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Կարելի չէ Փիլոնի փիլիսոփայութիւնը այնքան յստակօրէն առնչել՝ փիլիսոփայական որոշ ուղղութեան մը կամ դպրոցի մը:

Փիլոնի փիլիսոփայական միտքը բազմազան ու որոշ չափով անկայուն է, որովհետեւ ան թեւ առաւելաբար ընդունած էր Պլատոնականութեան ուղին, որու պատճառով կարելի է զինք դասել որպէս Միջին Պլատոնականութեան ներկայացուցիչ, այդուհանդերձ ան կը կրէր նաեւ ազդեցութիւնը փիլիսոփայական այլ ուղղութիւններու, ինչպէս օրինակ՝ *Նոր-Պիլթագորականութեան*^[Ծ-45] եւ